Այդ վագրին մանուկ հասակից որսացել էր նրա հայրը, որովհետեւ Մարոն շատ սիրում էր նրան, այս պատճառով պահել, մեծացրել էին: Ինձ թւում էր, որ Մարոն էլ այն գազանների ձագերից մէկը պէտք է լինէր, որովհետեւ նրանցից չէր վախենում եւ նրանց շատ սիրում էր:

Ե. ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր կարդալ սովորեմ եւ «լաւ մարդէ դառնամ: Տասն տարեկան էի, երբ նա ինձ մեր թաղի քահանայի մօտ տարաւ: Այն օրը հոգեգալստեան տօնն էր: — «հոգեգալուստը լաւ օր է, — ասում էր մայրս, — եթէ երեխան այս օրը վարժատուն մտնէ, շատ բան կը սովորի, նրա համար որ, հոգին սուրբ այսօր առաքեալներին լեզու տուեց»:

Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն խօսքերը, որ մայրս ինձ վարժապետին յանձնելու ժամանակ ասաց. — «Տէր հայր, ծառայ լինեմ սուրբ աչիդ, որդիս քեզ համար ղուլ (ճորտ) եմ բերել, միսը քեզ, ոսկորը ինձ. ինչ ուզում ես արա, միայն թէ երեխաս մի բան սովորի»...

Ես բոլորովին չհասկացայ, թէ ինչ էին նշանակում մօրս խօսքերը, միայն լսեցի, որ տէրտէրը խոստացաւ ինձ լաւ ուսում տալ, բոլոր գրքերը կարդացնել, աւելացնելով, թէ «հանգուցեալ հայրսէ իր լաւ բարեկամն է եղել, եւ «նրայ խաթրու» ինձ վրայ առանձին ուշադրութիւն կդարձնէ եւ այլն:

Տէր Թոդիկը — այսպէս էր վարժապետիս անունը — իր ուսումը ստացել էր Աղթամարայ անապատումը: Թէ ինչո՞ւ համար նա թողեց վանքը, — այդ ես չգիտեմ, միայն ասում էին, որ նա բերեց իր հետ գիտութեան խիստ ահագին պաշար: Տէր Թոդիկը մեծ համարում ունէր ոչ միայն մեր քաղաքի մէջ, այլ մեր ամբողջ գաւառում հռչակած էր նրա իմաստութիւնը: Ով որ մի երազ էր տեսել, նրա մօտն էր վազում եւ նրանից բացատրութիւն խնդրում: Ում երեխան հիւանդ էր, նրան Նարեկ կամ Աւետարան էր կարդալ տալիս, որ առողջանայ: Ով որ մի գործ էր կամենում սկսել, նրա «տէրողորմեայի» վրայ էր փորձում իր բախտը: Մի խօսքով, նա մեր գաւառի մարգարէն էր. ամէն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամէն մարդ նրանից խրատ էր ընդունում...

Աստուած իմ, ինչե՜ր չէին պատմում նրա մասին... Ասում էին, տէր հայրը իր եղունգի վրայ մի բան է գրում, եւ այն գրի զօրութեամբ կնիկները իրանց առջեւ ծով են տեսնում եւ իսկոյն տկլորւում են... Ասում էին, թէ նա մի աղօթք է կարդում, եւ գարու հատիկների մրջեմի նման բարձրանում են դէպի տան սիւնը, եւ ընդհակառակն, նրա խօսքով արագաշարժ կարիճը քարացած